

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՆԱԿԹԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ
ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԱԿԹԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԱՌԱՋԱՑՈՂ ԲՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և
Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի
25-ի N 252-Լ որոշման հավելվածի 130-րդ կետով՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում նավթամթերքի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափեր սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելված N 1-ի:
 2. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում նավթամթերքի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 2-ի:
 3. Հանձնարարել.
- Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել նավթամթերքի բնական կորուստների չափեր սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման

հետ կապված ծախսերի իրականացումը, ներառյալ կապարակնիքի ձեռքբերումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:

- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ ապահովել նավթամթերքի բնական կորուստների չափեր սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների մեկնարկման համար սույն որոշման N 2 հավելվածով սահմանած տեղանքներում անհրաժեշտ (բավարար) նավթամթերքի առկայությունը և սահմանված ժամանակահատվածում ընտրված տարողությունների անձեռնմխելիությունը:
 - Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման մարմինների ղեկավարներին, սույն որոշման հավելված N 1-ում ընդգրկված հանձնաժողովի անդամ հանդիսացող պետական մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուրն իր մասով ապահովել հանձնաժողովում ընդգրկված անդամների գործուղման հետ կապված ծախսերը՝ համաձայն սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմանը համապատասխան:
4. Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին՝ յուրաքանչյուր փուլի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել ամփոփ տեղեկատվություն կատարած աշխատանքների և արդյունքների վերաբերյալ:

Հավելված N 1

ՀՀ վարչապետի

N -Ա որոշման

Կ Ա Ձ Մ

Հայաստանի Հանրապետությունում նավթամթերքի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափեր սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողովի

h/h
1. Կառույցի անվանումը, զբաղեցրած պաշտոնը
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության

Վնուն ազգանուն
Ժաննա Չաքար

Որակի ենթակառուցվածքի զարգացման վարչության պետ

միջգերատեսչական
նախագահ

- | | | |
|-----|--|---|
| 2. | <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարության</p> <p>Ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման բաժնի գլխավոր մասնագետ</p> | Գայանե Մարգարյան
(հիմնական թեկնածու) |
| 3. | <p>ՀՀ Էկոնոմիկայի նախարարության</p> <p>Տեխնիկական կանոնակարգման բաժնի պետի պաշտոնակատար</p> | Նաիրա Վարդանյան
(փոխարինող թեկնածու) |
| 4. | <p>ՀՀ Պաշտպանության նախարարության</p> <p>ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պլանավորման և ապահովման բաժնի պետ, գնդապետ</p> | Բորիս Գազարյան
(հիմնական թեկնածու)
համաձայնություն |
| 5. | <p>ՀՀ Պաշտպանության նախարարության</p> <p>ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների պլանավորման, ապահովման և շահագործման բաժնի պետ, գնդապետ</p> | Ռսկան Պոչինյան
(փոխարինող թեկնածու)
համաձայնություն |
| 6. | <p>ՀՀ ԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևան քաղաքի տեխնիկական անվտանգության փորձաքննության վարչության վառելիքի, լեռնահանքային, քիմիական օբյեկտների և սարքավորումների տեխնիկական անվտանգության փորձաքննության բաժնի պետ</p> | Կարեն Խաչատրյան
(համաձայնություն) |
| 7. | <p>ՀՀ ԱԻՆ՝ Տեխնիկական անվտանգության փորձագիտական լաբորատորիայի բաժնի պետ</p> | Մարտին Ասլանյան
(համաձայնություն) |
| 8. | <p>ՀՀ ԳԱԱ՝ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի տնօրենի</p> | Ռոբերտ Հակոբյան
(հիմնական թեկնածու)
համաձայնություն |
| 9. | <p>գիտական գծով տեղակալ, ք.գ.թ. գիտաշխատող</p> <p>ՀՀ ԳԱԱ՝ Մ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի գիտաշխատող</p> | Վահան Թորոյան
(փոխարինող թեկնածու)
համաձայնություն |
| 10. | <p>ՀՀ Փորձաքննությունների ազգային բյուրո</p> | Պատվական Ռուբենյան |
| 11. | <p>ՊՈԱԿ-ի գիտության գծով տեղակալ</p> <p>«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության գլխավոր չափագետ</p> | (համաձայնություն)
Կամո Մովսիսյան |

12.	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության Չանգվածի և անկյունագծային չափումների լաբորատորիայի վարիչ	(համաձայնությամբ Արամայիս Հարությունյանի)
13.	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության Չանգվածի և անկյունագծային չափումների լաբորատորիայի մասնագետ	(համաձայնությամբ Նարեկ Դանիելյանի)
14.	ՍԻՓԻԵՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ	Արա Հովհաննիսյանի թեկնածու, համաձայնությամբ
15.	ՍՊԸ փոխնախագահ ՍԻՓԻԵՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ	Հրաչյա Մկրտչյանի թեկնածու, համաձայնությամբ
16.	ՍՊԸ գլխավոր հաշվապահ Մաքս օիլ	Արմեն Մարտիրոսյանի
17.	ՍՊԸ նավթաբազայի ղեկավար Մաքս օիլ	(հիմնական թեկնածու համաձայնությամբ Վրեժ Խաչատրյանի թեկնածու, համաձայնությամբ
18.	ՍՊԸ տնօրենի օգնական Սիտան օիլ ՍՊԸ, բենզալցակայանի պատասխանատու	Հովհաննես Մանուկյանի
19.	Սիտան օիլ ՍՊԸ, բենզալցակայանի պատասխանատու	(հիմնական թեկնածու համաձայնությամբ Վահե Եղիազարյանի
20.	Ֆլեշ օիլ ՍՊԸ	(փոխարինող թեկնածու համաձայնությամբ Ստեփան Սիմոնյանի
21.	Ֆլեշ օիլ ՍՊԸ	(հիմնական թեկնածու համաձայնությամբ Վարդան Փարսյանի
		(փոխարինող թեկնածու համաձայնությամբ

Հավելված N 2

ՀՀ վարչապետի

N - Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

Հայաստանի Հանրապետությունում նավթամթերքի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափեր սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքների կատարման

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ
1.	Տարողությունների վերջնական ընտրության և նախապատրաստական աշխատանքների իրականացման նպատակով այցելություն Աբովյան, Հարթագյուղ, Գորիս, Ստեփանակերտ, Դիլիջան, Գավառ տեղանքներում գտնվող զորամասեր և տեղում տարողությունների կապարակներում:	ՀՀ-ում նավթամթերքի պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը սահմանելու համար միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)
2.	Տարողությունների կապարակների բացում, չափումներ:	Հանձնաժողով
3.	Չափումների առաջին փուլի մեկնարկ՝ յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում չափումների իրականացում:	Հանձնաժողով
4.	Չափումների երկրորդ փուլ՝ յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում չափումների իրականացում:	Հանձնաժողով
5.	Կատարված չափումների արդյունքների ամփոփում, մշակում և նոր ցուցանիշներով սահմանված ՀՀ կառավարության որոշման նախագծի շրջանառում:	Հանձնաժողով, ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն